ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԳՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՊ) ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հաստատված է ՀԳՀՄ Խորհրդի անդամների կողմից 14.04.2021թ

ԱՊՐԻԼ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

4 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4 ԱՊ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

6 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԱՌԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

6 ԾԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

7 ԱՊ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

7 ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

8 ՀԳՀՄ-Ն ՈՐՊԵՍ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԵՆԵՋԵՐ

8 ԳՈՐԾԱՏՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8 ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

9 ԱՇԽԱՏՈՂԻ և ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

10 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

10 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

ՀԳՀՄ Աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահպանության OSH, այսուհետև «Աշխատանքի Պաշտպանություն» քաղաքականություն (ԱՊ):

Հաստատված է ՀԳՀՄ խորհրդի անդամների կողմից
14.04.2021թ

Հայտնի է, որ մարդիկ պետության ամենաարժեքավոր ռեսուրսն են, և որ հաշմանդամությունն ու սահմանափակ կարողությունները թանկ են արժենում աշխատողի, ձեռնարկության և պետության համար: Պետք է համաձայնել նաև, որ անվտանգ և առողջ աշխատանքային պայմանները նպաստում են բարձր արտադրողականությանը, սոցիալական նպաստների աճին և կայուն զարգացմանը:

ՀԳՀՄ «Աշխատանքի պաշտպանության ոլորտում ռազմավարությունը մշակվել է «Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ» և «Բելգիայի Ձեռնարկությունների Ֆեդերացիայի» (ԱՊ) հարցերով առաջին խորհրդական Քրիս Դե Մեստերի կողմից մշակված ուղեցույցի հիման վրա:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանի գործատուների հանրապետական միությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Արհմիությունների կոնֆեդերացիայի հետ հանդիսանում է միակ պաշտոնական գործընկերը 3-կողմ սոցիալական գործընկերության շրջանակում, սոցիալ- տնտեսական բնագավառներում: 2020 թվականի հոկտեմբերի 5-ին ստորագրված հանրապետական կոլեկտիվ հերթական պայմանագրում, գլուխներից մեկը նվիրված է «Աշխատանքի պաշտպանությանը»: ՀԳՀՄ-ն կարևորում է գործատուների մոտ ԱՊ բարելավման անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ իրականացրել է մի շարք նախապատրաստական աշխատանքներ, որոնք ներառում են հետևյալ գործառույթները՝

1. ԱՊ ոլորտում թրեյների խմբի ուսուցանում, որի շնորհիվ շուրջ 10 թրեյներներ գործատուների համար կարող են իրականացնել ԱՊ ոլորտում, ռիսկերի գնահատման և կառավարման համակարգերի մասին գործատուների անձնակազմի ուսուցումներ:
2. Խորհրդատուների և փորձագետների պատրաստված խումբ, ովքեր իրականացնում են գործատուների կազմակերպություններում փորձագիտական գնահատականներ և խորհրդատվություն ԱՊ պայմանների բարելավման ուղղությամբ:
3. Գործատուների կազմակերպություններում ԱՊ կառավարման համակարգերի նախագծում և տեղակայում: Համաձայն «Աշխատանքի Միջազգային Կազմակերպության» OSH- 2001, ISO 45001 և ԳՕՍ 12.0.230 -2007 ստանդարտների պահանջների:
4. ԱՊ գրականության հայերեն լեզվով հրապարակումներ (9 գրքեր և 4 ուղեցույցներ): OSH կոմիտեների ձևավորում գործատուների կազմակերպություններում:
5. ՀԳՀՄ-ն Հայաստանի Արհմիությունների Կոնֆեդերացիայի հետ կնքած երկողմանի համաձայնագրի շրջանակներում իրականացնում է ԱՊ ուղղությամբ կոնֆերանսներ և քննարկումներ:
6. ՀԳՀՄ-ն ԱՊ-ն խթանելու համար կազմակերպում է ԱՊ ուղղությամբ քննարկումներ:
7. ԱՊ նկատմամբ գործատուների մոտիվացիան բարձրացնելու նպատակով ՀԳՀՄ-ն իրականացնում է փորձագիտական ուսումնասիրություններ ընկերություններում սոցիալական գործընկերների հետ միասին և ձևավորված հանձնաժողովի միջոցով «Կարգապահ» գործատուներին շնորհում հավաստագրեր 3 սոցիալական գործընկերների համատեղ ստորագրությամբ:

ՀԳՀՄ-ն բաղկացած է 31 տարածքային և ճյուղային միություններից և ՀԳՀՄ անդամների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 14000, որոնք պատկանում են տնտեսության առկա բոլոր ճյուղերին և գտնվում են ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: ՀԳՀՄ-ն սոցիալական գործընկերության և ԱՊ բնագավառում ուսումնասիրել է տարբեր երկրների լավագույն փորձը ներառյալ՝ Գերմանիա, Լատվիա, Կիպրոս, ՌԴ, Բուլղարիա և այլն:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՊ քաղաքականությունը և ԱՊ շրջանակի բարելավումը
2. ՀԳՀՄ կարողությունների խթանում ա)օրենքների և նորմատիվ ակտերի էքսպերտիզա բ) սոցիալական երկխոսություն դրա շրջանակում, ԱՊ օրակարգի բարելավում նաև Առողջապահության և Աշխատանքի տեսչության հետ, վերջինիս հետ համագործակցելով աշխատանքային խմբի շրջանակում հաշվետվությունների քննարկում և գործատուների մոտ ԱՊ տեսչական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության քննարկում: գ)կրթության նախարարության և կրթական հաստատությունների հետ համագործակցելով OSH մասնագետների վերապատրաստում, OSH դասավանդման մակարդակի բարելավում: դ) ՀԳՀՄ անդամների և գործատուների մոտ ռիսկերի գնահատում և ԱՊ համակարգերի ներդրման խթանում: ե) ԱՊ ոլորտում միջազգային և տեղական փորձի տեղայնացում: զ)Վճարովի և անվճար ծառայությունների մատուցում ՀԳՀՄ կողմից (թրեյնինգներ, խորհրդատվություն, դիագնոստիկա, նշաների տեղադրում, գրականության տրամադրում), է) Սոցիալական երկխոսության խթանում բոլոր մակարդակներում:
3. ՀՀ-ում գործող գործատուների շրջանում ԱՊ կարևորության վերաբերյալ իրազեկում և ԱՊ ուղղությամբ ՀԳՀՄ առաջատար դերակատարի ներկայացում:

ԱՊ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի գործատուների հանրապետական միությունը պարտավորվում է խթանել աշխատավայրի անվտանգությունն ու ԱՊ մշակույթը՝ ներառյալ այնպիսի մոտեցումներն ու փորձառությունները, որոնք նպաստում են անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի պահպանմանը: Ապագայում մենք հանձն ենք առնում նաև նպաստել աշխատանքի անվտանգության և ԱՊ բոլոր ասպեկտների վերաբերյալ կրթության զարգացմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև աջակցել ազգային քաղաքականության, ծրագրերի և համակարգերի զարգացմանը՝ փորձելով դիմակայել ԱՊ ոլորտում առաջացող նոր մարտահրավերներին:

1. ՀԳՀՄ կողմից ՀՀ-ում ԱՊ գործընթացների առաջնորդում:
2. Օրենսդրական բարեփոխումներ:
3. Երիտասարդների համար կրթություն - աշխատաշուկա շրջանակում, ԱՊ բաղադրիչի խթանում:
4. ԱՊ խթանումը մարզերում և համայնքներում, ՀԳՀՄ կողմից ստեղծվող սոցիալ-տնտեսական հանձնաժողովների շրջանակում:
5. ՀՀ-ում ԱՊ նկատմամբ ստերիոտիպի փոփոխություն, որպեսզի այն ընկալվի ոչ թե որպես վարչական ավելորդություն և բիզնեսի զարգացման պոտենցիալ խոչընդոտ, այլ որպես հավասար պայմանների ապահովման անհրաժեշտ նախապայման:

6. ԱՊ անհրաժեշտ է ներկայացնել որպես գործարար միջավայրի մաս, այն հանդիսանում է բիզնես միջավայրի տարածք, որի շրջանակում ՀԳՀՄ-ն հնարավորություն է ստանում պաշտպանելու իր անդամների շահերը: Հետևաբար ՀԳՀՄ-ն պետք է իրականացնի շահերի պաշտպանություն, ընդգրկուն գործառույթներ և արշավներ:

7. ՀԳՀՄ-ն հանդես գա, որպես «Աշխատանքի պաշտպանության ազգային» ջատագող և խթանող, որի առկայության պարագայում հարգվում է անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի իրավունքը բոլոր մակարդակներում: Որտեղ կառավարությունը, գործատուները, աշխատողները ակտիվորեն մասնակցում են անվտանգ և առողջ միջավայրի ապահովմանը՝ սահմանված իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների համակարգի միջոցով և որտեղ կանխարգելման սկզբունքին տրվում է բարձրագույն գերակայություն:
8. Աշխատաշուկայում ՀԳՀՄ դերի մասնակցության աճի ապահովումը, կայուն աշխատունակության ապահովման նպատակով և դրա համար ԱՊ ոլորտում աշխատողների մոտիվացիայի և վերաբերմունքի բարելավում ի նպաստ գործատուի: Կազմակերպություններում ԱՊ պայմանների բարելավում և աշխատողների առողջության պահպանում: Բարձրացնել արտադրողականությունը, բարելավել աշխատանքային պայմանները և դրանով ստեղծել նախապայմաններ ֆինանսական միջոցների հասանելիություն ընկերության համար, ֆինանսական ինստիտուտներից վարկ և դրամաշնորհեր ներգրավելու համար:
9. Կանխարգելման գործառույթների ուժեղացում, որը ներառում է ԱՊ բնագավառում բոլոր կողմերի ակտիվ մասնակցություն, աշխատանքային միջավայրի բարելավման գործընթացներ: Այդ նպատակով վտանգի աղբյուրների վերացում, այնուհետև վտանգի ազդեցության սահմանափակում անհատական պաշտպանական միջոցների կիրառելիություն: ԱՊ մասնագետների և փորձագետների ընդգրկվածություն, ովքեր պետք է օգնեն գործատուներին և աշխատողներին առողջ և անվտանգ աշխատատեղեր ստեղծելու հարցում, այդ նպատակով տրամադրելով տեխնիկական աջակցություն, գործիքներ և խորհուրդներ շատ գործնական մակարդակում և խորությամբ ըստ բարդ ռիսկային իրավիճակների վերլուծության արդյունքների:

Այս ուղերձը նաև ուղղված է կառավարության բոլոր մակարդակներին և պետական մարմիններին, ովքեր պետք է օրինակելի վարք ցուցաբերեն ներկայացնելու պետական հաստատությունների կողմից վերահսկվող աշխատավայրերը, որոնք նույնպես ցույց են տալիս առողջություն և անվտանգություն իրենց գործունեության մեջ, ինչպես նաև մասնավոր հատվածի գործատուների և աշխատողների շփման մեջ և պետական գնումների ոլորտում:

10. Միկրո և ՓՄՁ բնագավառում ԱՊ համակարգերի բարելավման գործառույթների զարգացում ըստ ՀԳՀՄ աջակցությամբ տրամադրված հատուկ ուղեցույցի, ի նպաստ որակյալ անվտանգ, առողջ և արդար աշխատատեղերի ստեղծման:

11. Սոցիալական գործընկերության խթանում ԱՊ նպատակների հասանելիության համար:

Այսպիսով Հայաստանի գործատուների հանրապետական միությունը կնպաստի ընդհանուր առողջության և բարեկեցության ծրագրերին, ինչպես նաև կաջակցի աշխատավայրում ներդնել աշխատողների անվտանգության ապահովման քաղաքականություններ և համակարգեր, որոնք հիմնված են աշխատավայրում անվտանգության բարձրագույն չափանիշների և առողջապահական լավագույն փորձի վրա՝ համաձայն ISO 45001 միջազգային ստանդարտների, միջազգային կոնվենցիաների պահանջների և ГОСТ 12.0.230-2007:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ընդունելով, որ անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրը, ինչպես նաև անվտանգության մշակույթը չի կարող հաստատվել միայն ՀԳՀՄ գործունեության արդյունքում՝ ՀԳՀՄ-ը ջանքեր կներդնի համագործակցելու ՀՀ կառավարության և արհմիությունների հետ: Այս համագործակցությունը կներառի սոցիալական երկխոսություն՝ քաղաքականություններ ձևավորելու, ծրագրեր մշակելու, համակարգերը վերահսկելու և գնահատելու, ինչպես նաև ԱՄԿ համապատասխան չափորոշիչները վավերացնելու և իրականացնելու համար, ինչպես նաև նպաստելու համապատասխան ազգային օրենսդրության, կանոնակարգերի, կոլեկտիվ պայմանագրերի և աշխատավայրի համար սահմանված քաղաքականությունների իրականացմանը՝ համաձայն աշխատանքի անվտանգության, ԱՊ ու աշխատանքային միջավայրի պահանջների:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԱՌԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ռազմավարության գլոբալ նպատակներն են հանդիսանում ԱՊ բնագավառում միջնաժամկետ և երկարաժամկետ բարեփոխումները: Գործնառական նպատակները հանդիսանում են ռազմավարական նպատակների ցանկալի արդյունքների հասանելիության ապահովումը: Այդ նպատակով ՀԳՀՄ-ն իր թրեյներների, աշխատակիցների և փորձագետների միջոցով ինչպես նաև սոցիալական գործընկերների ընդգրկվածությամբ և աջակցությամբ կիրականացնի գործողություններ համաձայն մենեջմենտի ոլորտում հայտնի SMART մեթոդաբանության՝ առանձնահատուկ S (SPECIFIC), չափելի M(Measurable), ընդունելի A(Acceptable), իրատեսական R(Realistic) և ժամանակով սահմանափակված T(Timebound): ՀԳՀՄ-ը կաջակցի, որպեսզի տնտեսության տարբեր ճյուղերի գործատուների մոտ նվազեցվեն առավելապես հանդիպող աշխատանքային վնասվածքների տեսակները և հիվանդությունների պատճառ հանդիսացող գործոնների հավանականությունը:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտակցելով, որ այս կարևոր աշխատանքն իրականացնելու համար ՀԳՀՄ-ն կարիք ունի համագործակցել ՀՀ կառավարության և արհմիությունների հետ՝ միությունը շարունակական գործողություններ կձեռնարկի՝ ջատագովելու սոցիալական երկխոսության օրակարգում աշխատանքի անվտանգությունը և աշխատողների առողջության պահպանումը՝ որպես բարձրագույն գերակայություն:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԳՀՄ-ն ընդունում է կրթության, վերապատրաստման և տեղեկատվության փոխանակման կարևորությունը ու, հետևաբար, պարտավորվում է առաջին հերթին տեղեկացնել, կրթել և վերապատրաստել ընկերությունների ղեկավարությանը, ինչպես նաև ապահովել ուղիներ, որոնց միջոցով գիտելիքն ու տեղեկացվածությունը կարող են փոխանցվել հասարակության բոլոր շերտերին:

ՀԳՀՄ-ն կաջակցի անվտանգության բարելավմանն ուղղված տեղեկատվական, կրթական և վերապատրաստման գործողությունների իրականացմանը կամ կնախաձեռնի այդպիսի ծրագրեր:

ԱՊ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Աշխատանքային պատահարների և հիվանդությունների վերաբերյալ տվյալներ:
- ԱՊ կանոնակարգերի ամենատարածված խախտումները:
- ԱՊ կոմիտեների և աշխատանքային խորհուրդների գործառույթները:
- ԱՊ ծառայությունների առկայությունը և գործունեությունը:
- ԱՊ դասընթացի առկայությունը, մասնակիցների քանակը և տևողությունը:
- Տվյալներ՝ ձեռնարկություններին տրամադրված ստուգման և տեխնիկական օժանդակության միջոցով:
- Տվյալներ և տեղեկություններ ԱՊ- մասնագետներից և ԱՊ ծառայություններից:
- Հարցումների, (ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ ոլորտների) իրականացում՝ ստանալու համար գործատուների և աշխատողների կարծիքները ձեռնարկություններում ԱՊ կազմակերպման և իրականացման կարևոր ասպեկտների վերաբերյալ:
- Այլ աղբյուրներից ստացված տվյալները, ինչպիսիք են վավերացված ուսումնասիրություններն ու հետազոտությունները:
- Այլ երկրներում կատարված ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ տեղեկատվության միջազգային աղբյուրների օգտագործումը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առկա տվյալների և տվյալների աղբյուրների քարտեզագրում:
- Կատարելագործել ԱՊ տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները:
- Բարձրացնել հուսալիությունը:
- Ստեղծել աշխատանքային պատահարների և հիվանդությունների գրանցման և ծանուցման հստակ մեխանիզմներ ու տրամադրել գործատուներին լավ տեղեկատվություն իրենց պարտականությունների վերաբերյալ:
- Ամրապնդել հավաքագրված ԱՊ տվյալների վերլուծության և հետազոտության ինստիտուցոնիալ կարողությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Այս մոտեցումը ներառում է մի շարք դրական կողմեր:

- ԱՊ փորձագետների կամ մասնագետների վերապատրաստում, որոնք հարմարեցված են մասնագիտորեն այս ոլորտում աշխատել ցանկացող անձանց համար:
- Ձեռնարկության մակարդակում որոշակի ԱՊ առաջադրանքներ և պարտականություններ իրականացնելու դասընթացներ:

- Վերստուգողների, աշխատողների և աշխատողների ներկայացուցիչների համար ԱՊ դասընթացներ:
- ԱՊ տեսուչների կարողությունների խթանում:

ՀԳՀՄ-Ն ՈՐՊԵՍ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԵՆԵՋԵՐ

Այս մոտեցումը ներառում է մի շարք դրական կողմեր:

- Վերապատրաստում և քննության բովանդակության վերահսկում:
- Այս պարագայում անհրաժեշտ չէ ունենալ սեփական ուսումնական հաստատություններ, մարդիկ և ռեսուրսներ:
- Ուսումնական կենտրոնների հավատարագրման համակարգ ՀԳՀՄ կողմից:
- Եկամուտներ՝ վերապատրաստման կենտրոնների կողմից վճարված յուրաքանչյուր թեկնածուի վրա հիմնված համակարգի դիմաց:
- Աշխատանքային օրենսգրքի և այլ հարակից օրենքների բարելավում:

ԳՈՐԾԱՏՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գործատուից պահանջվում է ապահովել, որպեսզի իր հսկողության տակ գտնվող աշխատավայրը, մեքենաները, սարքավորումները և գործընթացները, ինչպես նաև քիմիական, ֆիզիկական և կենսաբանական նյութերն ու գործոնները լինեն անվտանգ և զերծ ռիսկերից այնքանով, որքանով դա հնարավոր է: Ավելին, անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվեն համարժեք և համապատասխան պաշտպանիչ հագուստ և պաշտպանիչ սարքավորումներ՝ կանխելու դժբախտ պատահարները կամ առողջության վրա բացասական ազդեցությունները: (ԱՄԿ կոնվենցիա 155, հոդված 16)

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Գործատուն պարտավոր է ապահովել աշխատողների անվտանգությունն ու առողջությունը՝ աշխատանքի հետ կապված յուրաքանչյուր առումով, ներառյալ COVID -19 պայմանավորված առանձնահատուկ պահանջները, նաև հեռավար աշխատանքի պարագայում:

Իր պարտականությունների համատեքստում գործատուն պետք է ձեռնարկի աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներ, ներառյալ աշխատանքային ռիսկերի կանխարգելումը և տեղեկատվության և ուսուցման տրամադրումը, ինչպես նաև անհրաժեշտ կազմակերպական և միջոցների ապահովումը:

Ռիսկի վրա հիմնված մոտեցում՝ ըստ կանխարգելման սկզբունքների՝

- Ռիսկերից խուսափել:

- Գնահատել այն ռիսկերը, որոնցից հնարավոր չէ խուսափել:
- Վտանգի աղբյուրում ռիսկերի դեմ պայքար:
- Տեխնիկական առաջընթացին հարմարվելը
- Փոխարինել վտանգավորը ոչ վտանգավորով կամ պակաս վտանգավորով:
- ԱՊ ծառայությունների մատուցում:
- Եվ այլն:

ԱՊ ծառայությունները մշակվում և զարգացվում են ՀԳՀՄ անդամների շրջանում նրանց կարիքների գնահատման հիման վրա և առկա պահանջարկով:

Սույն ռազմավարությունը ձևակերպված է տարբեր մակարդակների համար:

- Ազգային (մակրո) մակարդակով՝ ամբողջ հանրապետությունը ընդգրկող քաղաքականությամբ և ծրագրերով:
- Ճյուղային կամ տեղական (մեզո) մակարդակ, որպեսզի ազգային քաղաքականությունը լինի հարմարեցված տարածաշրջանային/տեղական համատեքստին:
- Ձեռնարկության (միկրո) մակարդակով, հաջողված փորձը տարածելու և մարտահրավերները կանխարգելելու համար, ինչպես նաև գործնական տվյալները ազգային մակարդակ հասցնելու նպատակով:

Անվտանգության և ԱՊ միջոցառումների իրականացման ծախսերը հոգում է գործատուն: Աշխատողնե-րի կողմից ծախսեր չպետք է լինեն (ԱՄԿ կոնվենցիա 155, հոդված 21):

ԱՇԽԱՏՈՂԻ և ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Արհմիության ներկայացուցիչները աշխատանքային անվտանգության և ԱՊ հարցերում պարտավորվում են համագործակցել գործատուի հետ և իրավունք ունեն ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն այն միջոցառումների մասին, որ ձեռնարկում է գործատուն պահպանելու աշխատանքի անտանգությունն աշխատավայրում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Գործատուների կազմակերպություններում կարող են ստեղծվել աշխատանքի անվտանգության համա-տեղ հանձնաժողովներ՝ զարգացնելու, իրականացնելու և գնահատելու այն քաղաքականությունները, ծրագրերն ու մեխանիզմները, որոնք դրված են տվյալ աշխատավայրում՝ նպատակ ունենալով բարելա-վել անվտանգության պայմանները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՀԳՀՄ առաջ է մղելու ծրագրերը կառավարությունում և դիմելու է ԱՄԿ-ին կամ այլ դոնոր կազմակերպություններին, որպեսզի ներգրավի ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ աշխատանքի անվտանգության ծրագրերն իրականացնելու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Քաղաքականությունը կվերանայվի ըստ անհրաժեշտության, բայց նվազագույնը 2 տարին մեկ անգամ: